

ԱԿ. ԾԵՐԵԹԵԼԻ

ԻՄ ԳԼԽՈՎ ԱՆՑԱԾԸ

899.9620

Ծ - 45

ՊԵՏՂԱՏ

30 MAY 2011

899.9625

5-45

uv

ԱԿ. ԾԵՐԵԹԵԼԻ

# ԻՄ ԳԼԽՈՎ ԱՆՑԱԾԸ

(ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՑ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ)

Վրացիներից բարգամեց  
ԱՐՄ. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ

Պ Ե Տ Յ Ր Ա Տ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1938



2742  
38

Յերբ ինձ գիմնագիտ տարան, ապշեցի, քանի վոր այնքան շատ լերեխաներ մի տեղ հավաքված յերբեք չէի տեսել: Ավելի հասակավորները պապանձված նստած էլին նստարաններին, իսկ նոր սովորող փոքրիկները խումբ-խումբ կուչ էլին լեկել պատերի մոտ: Այստեղ պատերին չորս կողմը փակցրած էլին թղթե լերկայն թերթեր, վորոնց վրա գրված էլին այբուբեն ու վարժություններ. այս էլին կարդացնել տալիս լերեխաներին: Խումբը մի ավագ ունեի, վորը սովորեցնում էր նրանց. ձեռքում բռնել էր մի ճիպոտ և, յերբ լերեխան հարցը խառնում էր, զարկում էր նրան, հա՛ գարկում: Մի տեղից մյուսն էլին անցնում և, յերբ շրջագայում էլին բոլոր պատերը, ապա նրանք ևս իրավունք էլին ստանում ու բիշների հետ նստարաններին նստելու: Այս վիճակում էլին, մինչև նրանց կարգալ սովորելը: Յերբեմն կտրցնում էլին մի տարուց ավելին: Յերեակայեցեք 7--8 տարեկան յերեխաներին առավուվա ժամի յոթից մինչև կեսորվա ժամը յերկուսը սոված-ծարավ, և այն ժա-

մանակ կգաք, թե ի՞նչ շարժարանքի մեջ եյին այն խեղճերը: Վումանց սիրան եր նվագում, վումանց գլուխներն եյին պտտվում և վայր ընկնում, սակայն վոչ վրք ուշադրություն չէր դարձնում նրանց վրա:

Գնալուն պես՝ ինձ կանգնեցրին առաջին պատի «այբուբեն»-ի մոտ: Սակայն, քանի վոր յես խուցուրի\*) գիտեյի, մխեդրուլի\*\*) գրել-կարգալ սովորել եյի և մորս շնորհիվ ուսուսաց այբուբենի հետ ել աչքս ծանոթ եր, մի որում վագ տալով անցա բոլոր պատերը: Ուսուցիչը գլուխս շոյեց, հավանեց ինձ ու մեծահասակների մոտ նստեցրեց: Կարգալը լավ եյի կարգում, բայց իմ դժբախտությունն այն եր, վոր ուսներեն չեյի հասկանում: Այն ժամանակ առհասարակ ընդունված եր թիթեղյա տախտակ, վորին «մարկա» եյին ասում: Ով վոր վրացերեն ձայն կհաներ, անմիջապես կաային ձեռքը և հետն ել մի յերկար տախտակ՝ քանոն կխփեյին նրա ձեռքի ափին: Հետո նա պետք ե աշխատեր, վոր մի կերպ ուրիշին հանձներ նույն կարգով, այսինքն՝ հանձնելիս «Բանո-

\*) խուցուրի — լեկեղեցական գիր:

\*\*) Մխեդրուլի — ուղղմական գիր:

Վրացերենն այս յերկու այբուբենն ուներ, այժմյան վրաց, այբուբենը նախկին Մխեդրուլեն (ուղղական) ե:

Մ. Թ.

նր» խփեր ձեռքի ափին: Այսպիսով այդ դժբախտության տախտակն անցնում եր ձեռքից ձեռք: Դասերը վերջանալիս ով չէր հաջողեցնում այդ տախտակը գլխից հեռացնել և մնում եր իր ձեռքում, պետք ե ամբողջ որը սոված դասարանում մնար: Նոր ընդունվող ուսներեն չիմացողները չեյին համարձակվում ձայն հանել, համր եյին մնում: Այս սովորությունը շատ բացասաբար եր ազգում յերեխաների վրա. յերեխաներն աշխատում եյին իրար խաբել, վորևե կերպ հիմարացնեն միմյանց, կեղծություն — փարիսեցիություն եյին սովորում: Ընդամենը հազիվ մի շաբաթվա ընդունված եյի, յերբ ինձ մոտ լեկավ հրեշտակային դեմքով մի փոքրիկ յերեխա և անուշ ժպիտով, բարեկամաբար, վրացերեն ինչ-վոր բան հարցրեց. յես ել, իհարկե, քանի վոր ուրիշ լեզու չգիտեյի, վրացերեն պատասխանեցի: Յերեխայի խաղաղ գեմքն իսկույն փոխվեց և ուրախությամբ տախտակն ինձ մեկնեց: Վերցրի, ուրիշ ճար չկար, բայց «Բանոնի զարկին» չհամաձայնեցի: «Բեզ ինչ կպակասի, վոր ինձ «Բանոն» չխփես, առանձին ենք, ով կիմանա», — խնդրում կի նրան: Իմ հակառակորդը բանը հեռվից սկսեց «յեթե ինձ խփեցին, զու ինչ կարմիր թիթեռ ես»: Յես այնուամենայնիվ չհամաձայնեցի, նա գնաց ու մատնեց ինձ: Կանչեցին, վախով ու դողողալով

դուրս գնացի: Ուսուցիչը հոնքերը կիտեց և հարց-  
քեց ինձ. «Ի՞նչպես ես համարձակվում չհնազանդ-  
վել. այստեղ հո՞ քո տունը չե»: Մկսեցի ինքս ինձ  
արդարացնել, բայց բան դուրս չեկալ:— «Լավ,  
յես քեզ խելք կսովորեցնեմ»: Կանչեց «ծառա-  
ներին» և հրամայեց՝ «գանահարել»: Հենց վոր  
այդ լսեցի, արյունը գլուխս տվեց, աշխատեցի  
փախուստ տալ:— «Մի թողնեք, բռնեցեք»,— գո-  
ռաց ուսուցիչը: Վազ տվին աշակերտներն ինձ  
բռնելու և դուռը պահեցին... Յես ներս վազեցի  
մյուս սենյակը, վորտեղ լերբորդ դասարանն էր:  
Այստեղ ել մի հարայհրոց բարձրացրի. վազեցի  
դեպի պատուհանը՝ ապակիները շարժեցի, դուրս  
թռա պատուհանից և վազ տվի դեպի տուն:  
«Ծառաները» հետևեցս ընկան: Առջևից նապաս-  
տակի պես լես եյի վազում և հետևեցս նրանք.  
աղմուկով— գոռգոռոցով: Լեղապատառ ներս ըն-  
կա տուն: Յերբ ծնողներս պատահածի մասին  
իմացան, շատ անհանգստացան և խորհուրդ տվին.  
«Գնա, ի՞նչ անենք, թող ծեծեն, դա հո՞ մենակ  
քեզ համար չե, բոլորին ել ծեծում են: Համբերիր,  
նեղություն քաշիր, սովորիր և վերջը մարդ կդառ-  
նաս. նրանց մոտ առանց ծեծի բանը գլուխ չի  
գա»... Բայց լես գործը հեռվից բռնեցի և ընկրձ-  
ված ասացի մորս. — «յեթե նորից կուղարկես այն  
քանդված զինազրան, յես ինձ կխեղդեմ»: Նրանք

վախեցան և հանգիստ թողին ինձ: Մի շաբաթ է  
արդեն չեմ գնացել դպրոց: Դպրոցի զիրեկտորը  
Կոցերուն էր, նոր նշանակված: Վրացերենը՝ գա-  
վառապետ յեղած ժամանակն էր սովորել. լավ  
գիտեր և վրացիներին ել շատ էր սիրում: Յե-  
կավ մեզ մոտ և ինձ ամեն ինչ հարցրեց: Յես ել  
առանց թաղցնելու հայտնեցի, ամեն ինչ— ինչ  
պատահել էր և ինչվոր զգում եյի: Զարմացավ,  
գլուխը շարժեց, ինձ շոյեց ու ասաց. — «Դու իմ  
անունը տուր և այլևս վոչ վոքից մի վախենա.  
վաղն ուղղակի ինձ մոտ կգաս՝ գրասենյակ, յես  
քեզ կտանեմ դասարան»: Յերկրորդ օրը, ճիշտ  
վոր ինձ տարավ— հասցրեց մեր դասարանը: Ա-  
մեն ինչ պարզեց և, յերբ «մարկա»-յի դեպքն  
իմացավ, զարմացավ: Կանչեց տեսչին, վերակա-  
ցուներին, ուսուցիչներին և ամենքին հայտնեց,  
վոր այդ օրվանից նման արարք թույլ չտան ի-  
րենց... Վերջ տվեք «մարկա»-յի գործադրու-  
թյանը. առանց պատճառի՝ ծեծելուց ձեռք քա-  
շեք: Ապա դարձավ իմ ուսուցչին և ասաց. —  
«առանձնահատուկ ուշադրություն դարձրու այս  
լերեխային»: Ճիշտ վոր, այն օրվանից դժբախ-  
տության տախտակը վերացրին, բայց գանա-  
կոծելուց չկարողացան միանգամից ձեռք քաշել:  
Առանց դրան չեյին կարողանում կառավարվել:  
Զուր հո՞ չե ասված. թե՛ «սովորությունը հավա-

տից ել հաստատուն ե»։ Այն ժամանակ ամբողջ Ռուսաստանը համոզված էր, վոր խելքն ու լավությունը ծեծի արդյունքն են։ Իհարկե, գիմնագիրաներում ել առաջին տեղն էր գրավում... Որ չեր անցնի, վոր յերեխաների աղմուկներով ու ծվոցներով չլցվեր ամբողջ շրջապատը։ «Վաշտին» այնքան ճիպոտ չեր պետք գալիս, վորքան՝ յուրաքանչյուր դասարանին։ «Ծառաները» սալերով ամեն որ թարմ-թարմ ճիպոտներ ելին բերում։ Աշակերտին կարող ելին բոլորը ծեծել, սկսած գիրեկտորից մինչև «ծառան»։ Վոչ վոք պատճառ չեր հարցնում։ Ո՛վ գիտի, քանիսն են հիվանդացել, քանիսն ալյանդակվել, և քանիսի բնավորությունն ել ընդմիշտ վատացել էր... Հաճախ էր պատահում, մի որվա մեջ միևնույն յերեխան զանազան ավագների կողմից յերեք-չորս անգամ «գանակոծվում էր»։ Հիշում եմ և յերբեք չեմ մոռանա. մի ուսու յերեխա կար, կրիժանովսկի, շատ անհանգիստ, բաց լավ տղա յեր. մի անգամ կես ժամ ուշացել էր դասից, գիրեկտորն իհարկե «ծեծել տվեց», նույն որը դասը չգիտեր, ուսուցիչն ել իր հերթին «ծեծել տվեց». յերբ դասերը վերջացան, այս անգամ վերակացուն «ծեծել տվեց», ասելով թե՛ քեզնից գանդատվեցին, տանը չարություն ես արել և հարևանի յերեխային քարով խփել։ Այսքանով ել չկարողացավ ազատվել։ Բոլորը մի-

ասին գանդատվեցին տեսչին, նա ել պատրաստվեց ծեծել տալու։ Տեսուչը շատ անգուլթ մարդ էր. նրանից այնպես ելին վախենում, ինչպես հողեառից։ Կրիժանովսկին այլևս չգիմանալով չարչարանքին՝ ձեռք վերցրեց կյանքից և իրեն նետեց Ռիոն գետը։ Յեթե պատահամա՞ք այդ պահին այնտեղ չգտնվեր մի մեդրել աշակերտ, վորը շատ լավ լողվորդ էր, բոլորովին կկորչեր։ Բացի գրանցից ել շարունակ ծեծվում էր ուրիշները կողմից։ Վայ նրան, ով լավ գանդուր մագեր կունենար։ Մի յերեխա, ճաճիաշվիլի ազգանունով, մեծ ականջներ ուներ։ Մեծ թե փոքրը՝ նրա ականջներից ելին բռնում։ Մի անգամ, գազազած վերակացուն այնպես պինդ քաշեց ականջից, վոր ականջը կիսով չափ պատռվեց. ուսով և մի քանի որից հետո միայն լավացավ։ Բաց ո՞վ կթողներ, վոր առողջ մտար նրա ականջը. վրա ելին պրծնում նրա ականջին և նորից վերք տալիս... Ստիպված դուրս յեկավ գիմնագրայից։ Մի աշակերտին՝ Կլզիաշվիլուն – «Բաևոնի» սուր կողքով այնպես զարկեց, ճակատին, վոր կաշին պլոկեց, նույնիսկ վոսկորն ել ջարդեց։ Յերեխային ուշաթափ տուն տարան։ Այս հանգամանքին վոչ վոք ուշադրություն չգարձրեց։ Նման բաներ անհաշիվ ելին։ Բարեբախտաբար, յես ազատ մնացի այդ տանջանքից, մի անգամ եմ միայն

ծեծվել. բայց այդ մի դեպքն էլ բավական էր, վոր իմ ամբողջ կյանքը դառնացներ: Յերբ ինձ դիրեկտորը տարավ դասարան, այն որվանից իմ ուսուցիչը միանգամայն փոխվեց իմ նկատմամբ, յեթե առիթներկայանար, իհարկե, վրեժը կլուծեր: Մի անգամ ինչ-վոր մի աշակերտ խաճապուրիներ\*) բերեց դասարան և վիճակախաղի դրեց մի-մի կողեկով: Բոլորն էլ գրվեցին: Միբոս ուզեց, յես էլ յետ չմնացի նրանցից: Վրա հասավ ուսուցիչը և նեղացավ, թե՛ ինչպես եք համարձակվել նման բան անել: Վերջրեց մի հակայական «ֆանոն» ու սկսեց առանձին-առանձին դուրս կանչել ստորագրողներին. հարցնում էր, թե՛ վնճի՞ ձեռքովն ես ստորագրել: Պատասխան ստանալուն պես՝ վորքան ուժ ունեք, զարկում էր ձեռքերին, գոռալով՝ «ելի կգրվես»: Յուցակն այբուբենական կարգով էր, իսկ իմ ազգանունը գրված էր ամենից վերջը: Հիշեցի հանկարծ իմ կարգացած Սաբա Որբելիանու առակաները, վորոնց մեջ հոպոպի գործադրած միջոցը—վոր յերբ ուզեց նեղ դրուլթյունից ազատվել, խորամանկության դիմեց—խաբեց աղվեսին: Այդ բաժանմունքում գրավոր աշխատանք պիտի լիներ: Մտածեցի, յե-

\*) Խաճապուրի—Ս. րեմտ. Վրաստ. հաց է, վորի մեջ պանիր է գրած ու այնպես թխած, պանրահաց: Մ. Թ.

թե աջ ձեռս մեկնեմ, վատ կլինի, կցավի, գիրս կփչանար. ասի՝ արի, ձախ ձեռս զոհեմ: Նա, իհարկե, ասաց. «ապա հանցավոր ձեռդ մեկնիր»: Յես ձախ ձեռս մեկնեցի: Նախ զարկեց, բայց խկուլն կասկածեց, իհարկե դիտմամբ. «ձախ ձեռքով ինչպես կարող եյիր ստորագրել»: Յերբ խոստովանվեցի, աջ ձեռքիս էլ բաժին ընկավ. ապա թողեց: Յավելը հո ցավեց, բայց ինձ ավելի այն բանն էր անհանգստացնում, թե ինչո՞ւ սխալվեցի և իզուր տեղը յերկու «ֆանոն» կերա, մինչդեռ մեկով կարող եյի պրծնել, ինչպես մյուս ընկերներս: Լաց եյի լինում. ձեռքս զողողում էր և, իհարկե այլևս լավ չեյի կարող գրել... Յերբ ուսուցիչը գրավորներն ստուգեց, իմը չհավանեց և նորից «ֆանոնով» զարկեց, վոր լավ գրեմ: Մինչև դասի վերջանալը, չորս անգամ արժանացա «ֆանոնի» զարկի... այն էր ու այն, նրանից հետո այլևս չկարողացա լավանալ: Չեղավ, այլևս սրտիցս չհանեցի այդ դեպքը: Չեռագիրս վատացավ և այսուր էլ դարձյալ անորոշ եմ գրում. ով իմ գրավորներին նաչի, կղարմանա, թե՛ այս ի՞նչ է, վորոչ տեղերում լավ ձեռագիր է, իսկ տեղ-տեղ՝ խազմզված ու անհասկանալի: Խազմզոցը պատահում է այն ժամանակ, յերբ հանկարծ բնագործն հիշում եմ իմ գլխի անցած դարձածը—այդ տանջալից որերը: Սա

Ինչ նշելու դեպք եր, բայց նրա համար եմ ա-  
սում, վոր ծնողներն ու ուսուցիչներն աչքի ա-  
ռաջ ունենան, թե ինչ ծանր ե, յերբ փոքր  
յերեխաների հետ խիստ ես վարվում, և վորքան  
վատ հետևանքներ ե ունենում քո կողմի վե-  
րաբերմունքը:

Ինձ ծեծելու դեպքի մասին իմացել եր դի-  
րեկտորը և նկատողություն եր արել ուսուցչին:  
Այն եր ու այն, այդ որվանից ուսուցիչն ինձ  
աչքից հանեց և այլևս ինձ վրա ուշադրություն  
չեր դարձնում: Կարծես մի կոճղ ելի ընկած  
այնտեղ, վոչ սովորեցնում եր ինձ և վոչ ել վո-  
րեվե բան հարցնում: Յես այնուամենայնիվ,  
մի մասն ընկերներին ոգնությամբ, մի մասն ել  
ինքս ինձնով սովորում եյի, ինչքան վոր ուժ  
ունեյի: Այնքան տաղանդ չունեյի, վորքան ցան-  
կություն ու աշխատասիրություն: Աշխատում  
եյի, որ ու գիշեր. ուրիշներից վոչ միայն հետ  
չեյի մնում. այլև շատ շատերից ավելի գիտեյի:  
Քննությունները մոտեցան, լուր տարածվեց, վոր  
«հոգաբարձուի» ոգնականը՝ Մաքսիմովիչն ե գա-  
լու, նա պետք ե քննի մեզ՝ աշակերտներին: Նրա  
խստության և քարսրտության մասին շատ ա-  
ռասպելական բաներ եյին պատմում: Ամենքն ել  
սարսափած եյին — և՛ ուսուցիչները, և՛ աշա-  
կերտները:

Մաքսիմովիչը յեկավ թե չե, իսկույն հրա-  
ման արձակեց.— «քանի վոր բոլորին չեմ կա-  
րող հարցնել, յուրաքանչյուր դասարանից յերե-  
քական աշակերտ բերեք ինձ մոտ՝ առաջավոր,  
միջակ և վերջին. այդպիսով կքննեմ, ամբողջ գիմ-  
նագիալի դրությունը կպատկերանա իմ առաջ»:  
Քննությունները լավ չանցան: Առաջուց վախե-  
ցած յերեխաները շփոթվում եյին, գիտցածն ել  
մոռանում: Նախ հարցնում եր ընտրովի յերեք  
աշակերտներին վորևե բան, յեթե չեյին պատաս-  
խանում, ապա ամբողջ դասարանին եր դառնում:  
Յեթե նրանցից ել վոչ վոք չեր պատասխանում,  
ուսուցիչը պետք ե բացատրեր: Հաճախ ուսու-  
ցիչներն ել եյին դեմ ընկնում, շփոթվում. այդ  
դեպքում, ինքը՝ քննություն ընդունողն եր բա-  
ցատրում և յերեխաներին կրկնել տալիս: Մա-  
նոր մեթոդ եր նրա կողմից ընդունված: Այն ժա-  
մանակ գիմնագիալում սովորում եր ուշագրավ և  
հայտնի յերիտասարդ՝ Բեսարիոն Ղողոբերիձեն:  
Ուսուցիչներն ել մեծ հարգանք ելին տածում  
նրա նկատմամբ, և մանկավարժների հույսը նրա  
վրա յեր. «թե կազատի, նա կազատի և մեր ա-  
նունն ել կբարձրացնի», — մտածում եյին նրանք:  
Նրանց սպասելիքն արգարացավ, բայց վոչ այն-  
պես, ինչպես նրանք եյին կարծում: Ասում եյին՝  
«հաջող եր Բեսարիոնը, բայց շատ քրանակոխ յե-

դավ): Այսպես թե այնպես, չեթե նա յեւ չլիներ, Մաքսիմովիչն իր սրտի բարկութիւնը կ'իմաստէր Բուլժայիսի գիմնագիտայի և նրա ուսուցիչները վրա: Միջին դասարաններումն եւ վոմանք լավ պատասխանեցին: Վերջը հերթը հասավ ցածր դասարաններին: Մեր դասարանից ել, չարագործութեան ուրը յերբ յեկավ (այսպես էյինք կոչում ընդհանրապես Մաքսիմովիչի քննութիւնները), յերեք աշակերտի վերցրին և «թոնիր» իջեցրին: Յերրորդ աշակերտը, այսինքն՝ ամենավերջինը յես ելի: Իմ ընկերները դողում էյին. իսկ յես ավելի շուտ նրանց նայելու դուրս յեկա, բանի վոր գիտեյի, թե վորպես ամենավերջինը, յերևի շատ բան չեյին հարցնի և ուշադրութիւն չեյին դարձնի ինձ վրա: Վորոշ ժամանակ աշակերտները հաջող էյին պատասխանում. անգիր արած վոտանավորները լավ էլին բլբլացնում. բայց, յերբ բանը դատողութեան հասավ, սկսեցին շփոթվել: Զարմանալի յեր. «հոգաբարձուի» ոգնականի հարցերը, ինձ հիշեցրին պալատում իմացած խաղերը՝ «բերի չամոխտա», «աչատի», «անգե վիսի դմա խար» և այլն, զարմացա. «սա ինչ գիմնագիտային սագական բան է», — ասում էյի մտքումս: Բայց հիշեցի մեր տունը, մորը և այնպես աշխուժացա, վոր կարծում էյի, թե տանն եմ և չերկու—յերեք անգամ, յերբ իմ ընկերները

շփոթվեցին, յես դժգոհութեամբ գլուխս շարժեցի: Մաքսիմովիչը նկատեց և դուռաց.— «Ինչ ես գլուխդ շարժում քոտտ ձիու պես»: Վախեցա և յեզուս կապ ընկավ: Ուսուցիչն ինձ ոգնութեան հասավ և պատասխանեց նրան.— «յերևի ճանճը նեզում է և ձեռքը չի կարողանում շարժել»... — «Ինչ ճանճի ժամանակ է» — դարձավ դժգոհութեամբ ուսուցչին.— «և կամ անհրաժեշտութեան դեպքում ո՞վ է ասել սրան, վոր ձեռքը չշարժի. ձեռքերն առանց վորևէ պատճառի այս ու այն կողմ շարժելն է միայն արգելվում: Ձե, այստեղ ուրիշ պատճառ կա»: Ինձ կանչեց սեղանի մոտ:

- Յես նկատեցի, վոր, յերբ նրանք շփոթվում էյին, դու գլուխդ շարժում էյիր: Ճիշտ է. թե՛ չե: Մի վախիւր, ասա:
- Այո, ահամա շարժում էյի գլուխս:
- Որինակի համար, ինչը շփոթեցին:
- Ախր ասացին, թե՛ ուղտը կ'թռչի. բա ուղտը թռչող է. յերևում է ուղտ չեն տեսել:
- Իսկ դո՞ւ, դու վորտե՞ղ ես տեսել:
- Անցյալ տարի թուրքերը տանում էյին զեպի հրապարակ. հազիվ էյին շարժվում:
- Հետո վորտեղից գիտես, վոր չի թռչի:
- Թեպեր չունի:
- Ուրեմն թեպեր չունեցողը չի կարող թռչել:

որինակի համար՝ մարդ չի կարող թռչել:

— Վնչ:

— Չե՞ս լսել, վոր հներում մեկն ու մեկը թռած լինե՞ր:

— Հներում՝ Յենոքն ու Իլիան, բայց նրանք աստծու զորությամբ սայլով թռան:— Ինչու-  
թյունն ընդունողն աչքերը չոեց և հարցրեց ինձ:

— Այդ ո՞վ ասաց քեզ:

— Մայրս:

— Սատանաները վոր թռչում են, չե՞ վոր նրանք թևեր չունեն:

— Սատանաները չեն թռչում:

— Յեթե չեն թռչում, ապա ի՞նչպես են ամեն տեղ լինում և արագ-արագ դես ու դեն վազում:

— Գայլի վրա յեն նստած և այնպես են ման գալիս: Քահ-քահ ծիծաղեց նա և ձեռքը քսեց գլխիս: Այսպիսի քաներ եր հարցնում և քանի գնում աշխուժանում եր: Յես ել յերը նկատեցի, վոր այլևս չեր բարկանում, ավելի համարձակ դարձա: Վերջն սկսեց քննել: Անգիրներ հարցրեց, լավ պատասխանեցի:

— Միտքը հասկանում ես, — հարցրեց ինձ:

— Իհարկե՞, հասկանում եմ:

— Կարո՞ղ ես այդ աղոթքները վրացերեն թարգմանել:

— Ել ինչո՞ւ թարգմանել, քանի վոր այդ

նույն աղոթքները վրացերեն լեզվով ավելի շուտ եմ սովորել...

— Վհրտեղ սովորեցիր:

— Տանր:

— Յերևի ուսերենն ել տանը սովորեցիր:

— Վնչ, ուսերենն այստեղ եմ սովորել:—

Ապա դառնալով դեպի ուսուցիչը՝ հարցրեց.

— Դուք սխալված չե՞ք, վոր ամենից վերջն այս յերեխային եք ներկայացնում ինձ:

— Վնչ, ձերդ գերազանցություն, նախ վոր փոքր ե, ապա դեռ այնքան ել շատ ժամանակ չե, ինչ ընդունվել ե մեզ մոտ և առայժմ ուշադրություն չեյինք դարձնում. վոչ դաս ելի տալիս, վոչ ել հարցնում ելի, ասում ելի, յերեխայե, թող վարժվի դպրոցական կյանքին, պատասխանեց ուսուցիչը մի փոքր գունաթափ:

— Բա վոր չեյին հարցնում, դու ինչպե՞ս ելիր սովորում, — հարցրեց ինձ:

— Յերբ ուրիշներին կարդացնում եր ու բացատրում, չե՞ վոր յես ել դասարանումն ելի, լսում եյի և սովորում:

Տեսնում եք, — դարձավ նա դեպի իմ ընկերները. — վոր ուզենայիք, դուք ել այսպես կր սովորեյիք, «չե՞ վոր ձեր ուսուցիչը լավ ե բացատրում, այդ պարզ յերևում ե ամեն ինչից»:

Ձեռք տվեց ուսուցչին և շնորհակալություն հայտ-

28  
25  
70

նեց: Ինձ ել ճակատիս համբուրեց, վերկացավ  
տեղից, մենք ել ցրիվ յեկանք: Այլևս չեմ հի-  
շում, թե ինչպես հասա տուն. թուչելով, թե ման  
գալով. ուրախությունից չեյի իմանում ինչ անեմ:  
Յերբ տուն հասա, տանը հյուրեր կային. հայրս  
անմիջապես ձայն տվեց ինձ. ի՞նչ արիք, պըս-  
տըլիկս: Յես ել պատմեցի հորս, ինչ վոր պա-  
տահել էր: «Բա՛ն յես չգիտեյի՛.— բացականչեց  
հայրս,— քուռակը միշտ ել իր ցեղին է քաշում:  
Յերբ փոքր ժամանակս գտնվում եյի վանքում  
Պետրե վարդապետի մոտ, բոլորին ել գերազան-  
ցում եյի. ինչ վոր ուրիշները. տաս տարում եյին  
սովորում, յես յերկու—յերեք տարում անցա,  
վերջացրի. քերականություն, թվաբանություն,  
պատմություն, աշխարհագրություն և այլն: Բա-  
զերը շարունակ խանգարում եյին իրենց կըռ-  
կըռոցով, թե չե վազուց արդեն վերջացրած կլի-  
նեյի ու քամու տված Արիստոտելի համակար-  
գությունն ու արամաբանությունը. յեթե իհարկե  
մի փոքր ել մնալի այնտեղ: Դու ել, վորդիս,  
չե՛ վոր անվանի ընտանիքի վորդի յես, ուրիշ-  
ներից ել շատ պետք է սովորես, վոչ վոք քեզ  
չպետք է հավասարվի»: Մեզ մոտ յեղած հյու-  
րերն ել նույն տեսակի խրատներ տվին: Իսկ  
մայրս մեկուսի նստած, գլուխը կախ, կարծես  
նրա համար միևնույն էր. ինձ նույնիսկ չեր ել

նկատել: Յերեկոյան, յերբ քնելու համար ան-  
կողին մտավ, յեկավ մայրս և ձեռքը ճակատիս  
դրեց: Նստեց անկողնուս վրա: Յես մտածեցի՝  
«վա՛յ թե հիվանդ եմ և վորևե բան է նկատում.  
Թե չե՛ այսպես ուրիշ անգամ յե՛րբ է յեկել»:  
Շատ անգամ եմ ասել, այժմ ել կրկնում եմ,  
վոր մայրս զարմանալի սովորություն ուներ.  
Իրաժեշտի ժամանակ, յերբ յերկար ժամանակով  
գնում եյի վորևե տեղ, յերկար բացակայու-  
թյունից հետո յել, այնպես էր համբուրում,  
կարծես աղամա, անսիրտ: Այս բանը նկատելիս,  
ինքս իմ մեջ զարմանում եյի և չեյի կարողանում  
բացատրել: Բնավորությանս այս գիծը շարու-  
նակվեց նրա ամբողջ կյանքի ընթացքում: Իր  
թոռնիկների հետ ել այսպես էր վարվում: Մի  
անգամ, յերբ արդեն կին ու գավակներ ունեյի,  
նկատեցի, թե ինչպես կամացուկ մոտեցավ իմ  
փոքրիկ վորդուն, վոր անուշ քնած էր անկո-  
ղնում և զգուշությամբ, վորպեսզի չզարթնի,  
սկսեց համբուրել ու փաղաքել նրան: Այն ժա-  
մանակ նոր գլխի ընկա, վոր յերևի մեզ ել այդ-  
պես էր փաղաքում: Իսկ ինչո՞ւ այդ չեր անում  
արթուն ժամանակ, ո՞վ էր խանդարում նրան,—  
աղամա մտածում ես, և նա, դու մի ասիր, այն  
կարծիքին էր, ինչպես մի անգամ հայտնեց նա  
իր խոսակցության ժամանակ, վոր հաճախակի

փաղաքշանքը փչացնում է յերեխային, իսկ մշտական համբույրները կորցնում են իրենց արժեքը. չգիտեմ, ընդհանրապես ճիշտ է այս, թե՛ վոչ, բայց ինձ համար, ինչպես փորձեցի, նրա համբույրն ինձ համար դարձել էր ցանկալի անհրաժեշտություն: Այն յերեկոն յես թեկափորվեցի, յերբ կողքիս նստեց և փաղաքշանքով ասաց՝ աղոթեցի՛ր արդեն...

— Ի՞նչպես չե՛, — պատասխանեցի նրան:

— Այս առավոտ, մինչև դպրոց գնալդ հո չե՞ս մոռացել վոտքի կանգնած որհներգությունդ արարչին:

— Ինչպե՞ս կարող եյի մոռանալ... մանավանդ վոր դեպի փորձանք եյի գնում:

— Հա՛, բա՛, դրա համար ել աստված քեզ ազատել է և հաջողություն էս ունեցել: Առանց ասածու, վորքան ել շատ բան գիտենաս, բան չես կարող անել: Հորդ այսորվա ասածներին ուշք մի՛ դարձնի. նա յերբեմն այդպիսի հանաքներ գիտե անել:

— Ի՞նչ:

— Այն, վոր ասում եր, թե՛ ուրիշը վոր քեզ գերազանցի, ամոթ է: Յեթե ուրիշները լավ լինեն, քեզ համար ինչո՞ւ պետք է ամոթ լինի: Ամոթ է այն ժամանակ, յերբ չես սովորում և ինքդ քո ասպագալի մասին չես մտածում: Դու

ուրիշներին չպետք է ատելի լինես: Դու վոչ թե ուրիշների հետ բաս պիտի մտնես, և դառնաս ուրիշներին ատելի, այլև պետք է աշխատես միշտ լավ լինել. իսկ յեթե ուրիշներն ել քեզ նման լինեն, կամ քեզնից ել ավել, քեզնից ի՞նչ կպակոյի: Դու դարձյալ պետք է ուրախանաս նրանց բարության համար, դու վոր այսոր քննությունը լավ էս բռնել, տեսնո՞ւմ էս ինչ լավ տրամադրության տակ էս, իսկ նրանք՝ քո ընկերները, ս՛վ գիտի, ինչքան սրտամորմոք են:

— Լաց ելին լինում, մալրիկ:

— Հետո դու նրանց չխղճացի՛ր:

— Վոչ միայն խղճացի, այլև քիչ մնաց չես ել լաց լինելի...

— Հա՛, բա՛, յերբ նրանք ել քեզ նման հաջողություն ունենալին, դու անշուշտ կուրախանալիր, չե՞...

— Յերանի այդպես լիներ...

Հա՛, վորդիս, ուրիշի նկատմամբ ատելությունն ու նախանձը մտքովդ ել չպետք է անցկացնես, — դրանք յերկուսն ել սատանի սանդուղքի աստիճաններ են: Սատանան նախ խաբելով կամաց-կամաց բարձրացնում է այդ աստիճանները, ապա հանկարժ հրում է ու դեն ձգում: Յես խաչակնքեցի յերեսս, մայրս համբուրեց ջերմագին, յերկու-յերեք անգամ գրկեց

ինձ, լեռեսս խաչակնքեց «քնիր, գավակս» սասվ  
ու հեռացավ ինձնից: Իմ ուրախությանը չափ  
ու սահման չկար: Յերկար ժամանակ աչքս չը-  
կարողացա փակել. քունս չեր տանում, լերագ-  
ները պաշարել ելին ինձ. միշտ հրեշտակների  
հետ ելի սավառնում և խաղում:

Քննութունները վերջացան. Գնաց Մաքսի-  
մովիչը: Խաղաղվեց ամեն ինչ և ինձ ել առաջ-  
նակարգ նվերով փոխադրեցին լեռկորդ դասա-  
բանը: Բոլորովին այլ աչքով եյին նայում թե  
ընկերներս և թե ավագները, այդ չես շատ լավ  
եյի անսնում և աշխատում ելի շխայտառակիւել:  
Որ ու գիշեր աշխատում եյի սովորել, հա սովո-  
րել. աչնքան սիրով եյի սովորում. և յեթե իմ  
այս աշխատասիրության ու փոքր տաղանդի հետ  
լավագուչն ղեկավարութուն ունենայի, ավելի  
ճիշտ ճանապարհի վրա կանգնած լինեյի, ավելի  
լավ արդյունք կտացվեր. բայց դժբախտութունն  
այն եր, վոր այն ժամանակ մանկավարժությունը  
շատ ցածր մակարդակի վրա յեր կանգնած: Յե-  
րեխաներին դաստիարակում եյին թուլակի պես  
և վոչ վորպես մարդկային եյակներ: Աշակերտ-  
ները բոլոր ատարկաներն անգիր պետք ե անե-  
յին, բայց միտքը հասկանում եյին թե վոչ, այդ  
մասին վոչ վոք չեր հարցնում: Մի ուսս տղա  
Վոլկով ազգանունով, մի որ աստվածաշնչից նրան

դաս հարցրին, խեղճն անգիր չեր արել, բայց  
լիր խոսքերով հիանալի կերպով բացատրեց դասը.  
ուսուցիչը լսեց, լսեց և ծիծաղեց. — քո խոսքե-  
րով վոր ասում ես, միթե չես հավանում դրա  
զրոդի խոսքերը: Շշպրեց ու հեռացրեց նրան,  
մատյանում դրեց վատ թվանշան: Մի ուրիշ ան-  
գամ, յերկրորդ անգամ դուրս բերեց, յերբ արդեն  
անգիր եր արել դասը. Վոլկովն այս անգամ  
անգիր արած նյութն այնպես եր վրա տալիս,  
վոր այլևս ժամանակ չեր մնում շունչ քաշելու.  
Թեև իհարկե ասածներից վոչինչ չեր հասկանում:  
Հավանութուն տվեց՝ «այ թե ինչպես պետք  
ե սովորես», և լավ թվանշան դրեց: Այսպես  
եյին վարվում այն ժամանակվա բոլոր ուսու-  
ցիչները: Մակայն նրանց թվում միակ Տրոյե  
ազգանունով մեկը բոլորովին ուրիշ ձևով եր  
վարվում: Մաքսիմովիչի մեթոդն եր ընդորինա-  
կել, անգիր անելիքը շատ քիչ եր տալիս, ըն-  
դամենը մի քանի տող, բայց դրա փոխարեն  
վոչ միայն միտքը, այլև բոլոր խոսքերի նշա-  
նակութունը պետք ե իմանայինք և բացատ-  
րելինք: Նրա դասարանում բոլորը, մեծ թե փոք-  
րը, հավասարապես լսողության եյին դառնում,  
ճանճ վոր թուշեր, մարդ կլսեր: Այն ժամանակ  
ընդունվում եր, ինչպես և այժմ, ուսուցիչները  
հերթով հարցնում եյին աշակերտներին, այնպես

վոր աշակերտը գիտի, թե յերբ և հերթը հասնե-  
լու իրեն, այդ որվա համար ել լավ պատրաստ-  
վում ե, իսկ մյուս որերին ուշադրության չի  
առնում. այսպիսով ուսման մեջ հավասարակը-  
նություն չի լինում: Իսկ Տրոյեյի դասարանում  
ամեն անգամ բոլորը պատրաստ պետք է լինե-  
լին: Մեկին վոր հարցնում եր, հանկարծ, անըս-  
պասելի կերպով դառնում եր մեկ ուրիշին, թե՛  
«շարունակիր»: Հին ու նոր դաս չգիտեր, անըս-  
պասելի կերպով մեկ ել տեսար հին դասն ել  
հարցրեց, նորն ել: Յուրաքանչյուր նատարանին  
կցեց մի ավագ աշակերտ. սրանց պարտականու-  
թյունն եր ամեն որ աշակերտներին դասը հարց-  
նել և թվանշան գնել: Ապա այդ ավագներին  
յես պետք է հարցնեյի և թվանշան գնեցի:  
Բացի այդ, պետք է ստուգեյի նաև այդ ավագնե-  
րի աշակերտներից մի քանիսի, թվանշան գնեյի  
և բոլորը ներկայացնեյի դասատվին: Յերբ դասա-  
րան եր մտնում, նայում եր բոլորի գեմքին և  
ստուգելու համար դուրս եր բերում մի քանի-  
սին: Գաբաշվիլի ազգանունով մեկը կար մեր դասա-  
րանում, վորը գյուղից եր գալիս ուսումնարան և  
այդ պատճառով շարունակ դասերից ուշանում  
եր: Խեղճ տղային չոքեցնում եյին անկյունում  
մինչև դասերի վերջը: Այնպես վոր, հազվադեպ  
եր նրան վոտի վրա տեսնել դասարանում: Մի

անգամ, Գուլթայիտում ունեցած բարեկամներից  
մեկի մոտ հյուր եր գնացել և գիշերը մնացել եր  
նրա մոտ: Սովորելու գիրք ել եր ճարել (այն  
ժամանակ վոչ միայն կողմնակի գրքեր, այլև դա-  
սագրքեր շատ քիչ եյին, ընդամենը մի քանի  
հատ. և իրարից եյինք վերցնում) և դասը լավ  
եր սովորել: Շուտ չեկավ, բայց, քանի վոր  
ամեն որ չոքելու սովոր եր, գնաց ու ինքն իրեն  
չոքեց սովորական տեղը. վոչ վոք ուշադրու-  
թյուն չդարձրեց նրա վրա: Ավագ աշակերտը նրան  
լավ թվանշան եր գրել, յես ստուգեցի և ճիշտ  
դուրս յեկավ: Տրոյեն յերբ ընդհանրապես բոլո-  
րի թվանշաներն աչքի տակ անցկացրեց, Գա-  
բաշվիլու «չորսն» ել նկատեց: Յերևի զարմա-  
ցավ և դուրս կանչեց: Հարցրեց, բայց ինչ պատա-  
հեց նրան, թող ձեր թշնամուն չպատահի: Մի  
բառ անգամ չկարողացավ պատասխանել: Ու-  
սուցիչը գլուխը շարժեց և ինձ դուրս կանչեց.  
«Այս թվանշանը դու գրեցի՞ր սրան», — հարց-  
րեց նա:

— Այն, յես գրեցի, — պատասխանեցի:

— Ինչո՞ւ յես լավ թվանշան գրել, յերբ վոչ-  
ինչ չգիտեր:

— Յերբ յես հարցրի, գիտեր:

— Գիտեր: Այսպես շուտ, յերկու բուպելում  
ինչպես կարող եր մոռանալ: Այստեղ ուրիշ ինչ-

վոր բան կա,—ասաց խիստ կերպով,—կիմանամ,  
թե ի՞նչ կա, բայց դեռ ժամանակ չունեմ: Գա-  
բաշվիլի՛, գնա և այնտեղ չոքիր, վորտեղ կայիր.  
դու ել, Մերեթելի՛, գնա դրա մոտ և կողքը կանգ-  
նիր, մինչև իմ դասի վերջանալը: Հետո յերկու-  
սիդ ել միասին կստուգեմ: Թեև բոլորից շատ  
մենք Տրոյեյից ելինք վախենում, բայց, մինչ այդ  
չեյինք տեսել, վոր մեկին պատժեք. այժմ մտա-  
ծում եր, թե՛ ի՞նչպես համարձակվեցին խաբել  
ինձ: Սաստիկ հուզված եր ուսուցիչը:

— Ա՛յ դու մոլորված, այդ ի՞նչ արիր, չե՛  
վոր գիտեիր,—հարցրի ծածուկ, լերբ անկյանը  
մոտեցանք:

— Հիմա յեւ գիտեմ,—պատասխանեց լաց  
լինելով:

Բա ինչո՞ւ չպատասխանեցիր:

— Վոտի վրա վոր կանգնած եյի, չկարողա-  
ցա կարգի բերել մտքերս: Այս քանի ժամանակ  
ե, միշտ չոքած եմ սովորում և պատասխանն ել  
այդպես եմ տալիս: Դե, լսիր, ասեմ դասս: Սկսեց  
անգիր ասել: Վոր վեր կենամ, կմոռանամ: Ու-  
սուցիչը նկատեց և հարցրեց.— ի՞նչ եք փոփոսմ:  
Յես գնացի և ամեն ինչ հայտնեցի: Դուքս բերեց  
Գաբաշվիլուն, չոքեցրեց և այնպես հարցրեց:  
Հավ պատասխանեց, մի քանի անգամ կրկնեց  
այդ բանը և այնպես զարմացավ, վոր վեր կա-

ցավ տեղից, դասարանը թողեց և ուղղվեց դրա-  
սենյակի կողմ: Ո՞վ գիտի, թե այնտեղ ի՞նչ արեց,  
բայց այն որվանից արդեն Գաբաշվիլուն չոքած  
չենք տեսել:

Մի անգամ, լերբ դասը վերջացավ և հանգըս-  
տացրին, չես, քանի վոր առավոտը բան չեյի  
կերել, վազ տվի տուն, դրեցի արխալուղիս  
դրպանը տաք մնաղիս\*) և շտապեցի դեպի դա-  
սարան, վոր չուշանամ: Տրոյեյի դասն եր սկսվում:  
Հենց նոր մտել եր ինձանից առաջ և հինգ աշա-  
կերս ել դուքս եր բերել և շարեշար կանգ-  
նեցրել, գլուխս ներս տարա թե չե, գոռաց,—  
դու արի այստեղ և կանգնիր սրանց մոտ: Գնա-  
ցի ու կանգ առա: Տաք մնաղիս կավ ազդրիս  
և այրեց: Սկսեցի շարժվել—անհանգստանալ,  
ձեռքով շոշափելի, ստիպված լեղա կանգնած  
տեղս շարժվել: Ուսուցիչը նկատեց և հարցրեց,  
թե ի՞նչ ե պատահել: Այլևս թագցնել չեր կարե-  
լի... Մնաղիս գուրս բերին զրպանիցս... աշա-  
կերաները հոհոացին: Ուսուցիչը ծիծաղեց բե-  
խերի տակ, մնաղիս վերցրեց և իր առաջ սե-  
զանին դրեց: Քրանել—կարմրել ելի, չեյի իմա-  
նում ինչ անեմ: Սկսեց դասը հարցնել: Դժբախ-  
տաբար, հենց այդ պահին հանկարծ տեսուչը ներս

\*) Մնաղիս.—սիմիոնդի փոքր, կոոր հաց. Մ. Թ.

մտալ: Ծնկերս սկսեցին զողզողալ: Շատ ան-  
գութ մարդ եր մեր տեսուչը յերեխաներին  
դաստիարակելու գործում. «ծեծից» բացի ուրիշ  
բան չեր ճանաչում: Բոլորովին հասարակ առիթ  
ել բավական եր, վոր աշակերտին աչքից հաներ:  
Մի անգամ միևնույն ժամանակ յերկու յերեխային  
«ծեծեց». մեկին նրա համար, վոր մազերը յեր-  
կարել եր, և մյուսին ել նրա համար, վոր շատ  
կարճ եր խուզել: Մտածեցի՝ «այս մճաղին ինձ  
լավ բան չի խոստանում»... Ճիշտ վոր, տեսավ  
թե չե, վորոտաց.

— Այս մճաղին ի՞նչ գործ ունի այստեղ, ո՞վ ե  
բերել... մի աշակերտ, վոր հաճախ ինձ հետ վի-  
ճում եր, վեր թռավ տեղից և հայտնեց, թե՛  
Ծերեթելու գրպանից հանեցին:

— Ինչո՞ւ յես բերել, — հարցրեց բարկացկոտ.  
Լեզուս կապ ընկավ, բայց ուսուցիչը հայտնեց  
նրան, թե այժմ կիմանաք, և հարցրեց ինձ. —  
սա ի՞նչ ե: Մճաղի, — պատասխանեցի յես նվա-  
ցով:

— Ինչի՞ց ե պատրաստվում:

— Յեզիպտացորենից:

Յեզիպտացորեն լե՞րբ են ցանում, ինչպե՞ս  
ե աճում, ինչպե՞ս են աշխատում, մճաղին լե՞րբ  
են պատրաստում և այլն: Այս բոլոր հարցերն  
ինձ տալուց և պատասխաններ ստանալուց հե-

տո դիմեց ինձ ու ասաց. թե՛ լավ, վաղը չմո-  
ռանաս բրինձ բերել, վաղն ել բրնձի մասին  
կխոսենք: Տեսուչը գլխի ընկավ, վոր ուսուցչի  
ցանկությամբ են մճաղի բերել և առանց ձայն  
հանելու դասարանից դուրս գնաց: Ուսուցիչը  
մատնող աշակերտին կանչեց ու հարցրեց. — դու  
վոչինչ չունե՞ս գրպանում: Տեսավ ու վեզ գտավ. —  
սա ի՞նչ ե, սա հո՞ խաղալիք ե, դասարան ինչո՞ւ  
յես բերել, գրպանդ դրել... Ծերեթելին մճաղին  
նրա համար բերեց, վոր սոված եր,  
բայց ուտել չեր հասցրել, շտապել եր դպրոց.  
Իսկ դու խաղալու հետևից ես ընկած: Լավ,  
կանգնիր մինչև դասի վերջանալը: Յես այդ վե-  
զով կներկայացնեմ քեզ տեսչին: Վեզ բերող  
աշակերտի գույնը թռավ, լաց լեղավ: Յերբ դասը  
վերջացավ, դարձավ լաց լեղողին և ասաց. —  
լավ, այժմ ներում եմ, բայց հետագայում զգուշ  
լեղիր, ինչ քեզ համար չես ուզում, այդ բանը  
ուրիշին մի անի:

Այս մեր սիրելի ղեկավարը դտսավանդում  
եր միայն մինչև չորրորդ դասարանը. բարձր դա-  
սարաններում այլևս իրավունք չուներ, քանի  
վոր բարձրագույն կրթություն չեր ստացած:  
Յեթե ուսուցիչն մի բան սովորեցինք, այդ ել  
նրա շնորհիվ, իսկ նրանից հետո, բարձր դասա-  
րաններում՝ չորրորդից սկսած, բացի շատ բան

մոռանալուց, վորևե նոր բան չավելացավ մեր գիտելիքներն վրա: Չորրորդ դասարանը բավական դժվար դասարան էր. բոլորովին նորանոր առարկաներ և նոր ուսուցիչներ, պատմութուն, լեզուաբանութուն, յեռանկունաչափութուն, բուսաբանութուն, կենդանաբանութուն, լատիներեն, կրոն, անտեսագիտութուն, հանքաբանութուն և այլն, բոլորը միասին գլխներն թափեցին: Այլև բան չեկինք հասկանում, ձեռք զարկինք անգիր անելուն և մի կերպ քաշ ելինք տալիս, լոյս տանում, թեև բոլորովին բան չեկինք հասկանում այդ առարկաներից: Ուրիշի մասին ինչ ասեմ, բայց լես վոչինչ չեյի հասկանում, թեև առաջնակարգ աշակերտ ելի համարվում և այս բարձր դասարանում վոսկե տախտակի վրա անունս գրելու պատվին արժանացած, մի քիչ գլուխս խառնվեց: Ռուսաց լեզվի մի ինչ վոր ուսուցիչ նշանակեցին, Սուպեզա աղբանունով: Նրա պես տարրինակ մարդ հազիվ գտնվեր, ինչ վոր բանի վրա շարունակ բարկանում էր. քիթը կախած և յեթե վորևե մեկին տեսներ ծիծաղելիս՝ գլուխը կորցնում էր: Իսկ լես դժբախտաբար, այնպիսի ծիծաղկոտ դեմք ունեյի, վոր լացի ժամանակ անգամ կարծես ժպտում էյի: Ինձ բոլորովին աչքից գցեց այդ մարդը և հնար չեր տալիս առաջ գնալու: Առաջին

նստարանից տեղափոխեցին բոլորովին վերջին նստարանը, «այլև աչքի չերևաս» — ասում էր նա: Մի անգամ ինչ-վոր լավ տրամադրության տակ էր, դուրս կանչեց ու հարցրեց տված դասը: Լավ պատասխանեցի, գոհ մնաց, «դասդ լավ ես սովորել», բայց պատճառն ինչ է, վոր միշտ ծիծաղում ես. անասունի պես մի ծիծաղիր»: Յես կարծեցի, թե՛ փորձում ե ինձ և պատասխանեցի՝ «անասունները վոչ ժպտում են և վոչ ել ծիծաղում»: այս վոր ասացի, վեր թռավ, ոճիքիցս բռնեց ձեռքով և դասարանից դուրս նետեց:

Վերջին նստարանին նստած ժամանակ, աշակերտները հետևի կողմից իրենց ձեռքերը դեպի ինձ եյին ուղղում և ինչ վոր շարժումներ անում: Յերևակայեցեք քառասուն հիսուն մատներ իմ կողմը պարզած, այն ժամանակ կհամոզվեք, թե՛ ինչո՞ւ դժվար էր ծիծաղը պահել: Յես ել հանկարծ հոհոում էյի: Պատճառը չեյի կարողանում ասել, իսկ նա թողնում էր դասը մի կողմ և ահագին աղմուկ բարձրացնում: Աշակերտներն ել այդ եյին ուղղում: Վերջն ել ինձ արգելեց իր դասերին ներկա լինել և պահանջ դրեց վարչության առաջ — կամ յես, կամ նա. հեռացրեք այդ աշակերտին: Բացի նրանից՝ բոլոր ուսուցիչներն ինձ սիրում էյին, առաջագեմ աշակերտ ելին համարում և չհամաձայնեցին նրա հետ:

Ինձ կանչեցին ու հարցրին, թե՛ պատճառն ի՞նչ է, վոր այդպես բարկացրել ես այս ուսուցչին: Յես սկսեցի լաց լինել և մինչև այս խոսակցության ավարտումն այստեղ ել ժպտացի: Դիրեկտորը վեր կացավ տեղից և գնաց Սուպեգի դասարանը, վոր ուրիշներից ել հարցներ և իմանար իսկական պատճառը: Բարեբախտաբար մըտնում ե գասարան և ներկա գտնվում մի այնպիսի տեսարանի, վոր իմ գործին բավականաչափ նպաստեց: Մի որինակելի աշակերտ կար մեր գասարանում Կ... Լ..., արագ արագ խոսել չեր սիրում, և շարունակ մտածելով եր պատասխանում, իսկ Սուպեգը, չերբ վորևե մեկին դաս եր հարցնում, ասում եր, թե՛ մի մտածիր, շուտ ասա դասդ: Նրան դուրս եր բերել գրատախտակի մոտ, ինչ-վոր մի բան գրել եր տվել և սպասում եր բացատրության: Կ... Լ... մտածում եր, վոր լավ պատասխանի: Անհամբեր մանկավարժը հետևից գող ե գող մոտենում եր նրան, հրում դեպի պատն այնպես, վոր աշակերտը գլուխն ամուր դիպցնում եր պատին: «Ինչի՞ն ես սպասում, ասա, էլի»: Վախեցած և շշմած աշակերտի քթից սկսում ե արլուն հոսել: Հենց այդ ժամանակ ե հասնում դիրեկտորը: Մլուս ուր Սուպեգին այլե-վըս չտեսանք դպրոցում, նրա փոխարեն ուրիշին նշանակեցին՝ Պանիգովսկուն, բայց նոր նշանակ-

վածն ել մի բան չեր. ձայն չեր հանում, միշտ կարմրում եր: Կոշանակու ճարտասանություն գիրքը բերում եր գասարան և առանց ձայն հանելու մատով ցույց եր տալիս այն կտորները, վորոնց պետք ե անգիր անելինք. մենք ել նրա կամքը կատարում ելինք սուս ու փուս: Նրան «աղա-աղ-ջիկ» ելինք կանչում, ծաղրում ելինք, բայց նա չտեսնելուն եր տալիս: Վոչ մի կողմնակի գիրք չկար, վոր կարդայինք. նույնիսկ յեթե վորևե տեղ ճարում ելինք, կարդալու իրավունք չեյին տալիս. «Ինչ վոր լավ բան-կա, ճարտասանության մեջ ե տպված, այդ բավական ե. ուրիշ բան պետք չե»: Մի անգամ համարձակ աշակերտներից մեկը հարցրեց.— «Ինչ վոր այստեղ՝ այս գրքի մեջ բերված ե, նրանից ավելին Պուշկինը վոչինչ չի գրել»:— Դա ի՞նչ քո գործն է.— պատասխանեց ուսուցիչը, աշակերտը նորից շարունակեց իր հարցումները.— Պուշկինն ե լավագուշն գրող, թե՛ Հերցենը: Վեր թռավ տեղից վախեցած ուսուցիչը, մատներն ականջները խրեց և սկսեց աղմկել. «այստեղ չեմ լեղել, վոչինչ չեմ լսել, վոչ ել բան եմ ասել»... գոռաց—գոռաց ու դուրս լեկավ գասարանից:

Պակաս տարորինակ մարդ չեր նաև լատիներենի ուսուցիչը, վոր շատ լավ, հանգիստ և աշխատասեր ուսուցիչ եր. բայց ճանճից վախե-

նում եր. սարդին տեսնելիս՝ սիրաբեր գողում եր:  
Այս գիտելին բոլոր աշակերտները և յեթե նրան-  
ցից վորևե մեկը դաս սովորած չեր լինում, բե-  
րում եր հանկարծ սարդը և ծածուկ բաց թող-  
նում դասարանում. ուսուցիչը խրտնում եր, աշա-  
կերտները վեր ելին թռչում տեղներից, վոմանք  
սեղանի վրա ելին թռչում, վոմանք ել իբր թե  
ուզում են դասարանից դուրս հանել, մերթ մի  
անկուռն ելին գցում, մերթ՝ մյուսը, և այսպիսով  
դասն ել վերջանում եր:

Պարզ ե, վոր այսպիսի պայմանների մեջ լե-  
ղած՝ աճող սերունդը շատ բան չպետք ե ստանար  
գիմնազրիայում, յեթե այդ սարսափելի խավարում  
գեթ մի լույս չըողար: Դա լեհացի Ռոձիեվիչն եր,  
վոր նախ պրոֆեսոր եր լեղել, բայց հարբեցո-  
ղության պատճառով հեռացրել ելին և Ստավրոպո-  
լում տեսչական պաշտոն եր ստացել: Ապա այս-  
տեղից ել դուրս ելին արել և բերել մեզ մոտ,  
վորպես մաթեմատիկայի ուսուցիչ: Այս հար-  
բեցող ուսուցիչն ուշադրություն չեր դարձնում  
իր առարկաների կանոնավոր ավանդմանը, —  
վնչ հանրահաշվին, վնչ յերկրաչափության, վոչ  
յեռանկյունաչափության և վոչել ֆիզիկային.  
մեր կամքին եր թողել նրանց սովորելը և մենք,  
յերբ դժվարանում ելինք վորևե բան հասկանալ,  
հարցնում ելինք և հիանալի կերպով բացատրում

եր: Զարմանալի յե, վոր նրա առարկան ամենից  
լավ գիտելինք: Յերբ նկատեց, վոր մեր միտքը  
բավականաչափ անպատրաստ ե, զարգացողու-  
թյուն չունենք, սկսեց մեզ հետ այլ բաների  
մասին զրուցել, բացատրել. աշխատում եր մեզ  
գիտակցության բերել, զարթեցնել: Այն պահերին  
հայտարարեցին, վոր՝ ո՞վ ուզում ե Ռուսաստան  
գնալ և բարձրագույն ուսումնարանում սովորել,  
նա պետք ե լատիներեն սովորի, իսկ ով միայն  
ուզում ե գիմնազիան ավարտել, նա պետք ե  
կրոն սովորի. յեթե առաջագեմ աշակերտ լինի,  
մեղալն ել կստանա: Մեղալն այն ժամանակ  
հրապուրիչ նշանակութուն ուներ: Բայց իմ  
բոլոր ընկերները, թեև նրանցից վոմանք չեյին  
կարող Ռուսաստան գնալ չքավորության պատ-  
ճառով, լատիներեն սովորելը գերադասեցին:  
Նրանցից միայն մեկը, և յերկրորդը՝ լես, ցանկու-  
թյուն հայտնեցինք կրոն սովորելու, տարված  
մեղալն ստանալու ցանկությամբ: Ռուսաց լեզ-  
վի ուսուցիչը հրամայեց՝ «վերցրեք ինչ նյութ  
ուզում եք և ինքնուրույն մի աշխատություն գրեք,  
բայց պայմանով վոր, դիալոգներով լինի»: Յես  
հանձն առա և գրեցի մի տարրերինակ բան: Յերբ  
ուսուցիչը կարդաց, հանձնեց տեսչին, նա լել  
մանկավարժական խորհրդին ներկայացնելով՝  
հայտնել եր հետևյալը. — «Յեթե սրա գրողն

այժմ վանից չսանձահարվի, վերջը վատ կլինի»։  
Խորհրդում Ռոճիեվիչը չեր համաձայնել այդ մըտ-  
քին. ընդհակառակը՝ պաշտպանել եր ինձ և այն  
կարծիքը հայտնել, վոր այդ նյութի գրողն ապա-  
գա յե խոստանում, անհրաժեշտ ե ոգնել նրան  
և ընդառաջել։ Յես պահանջում եմ, վոր նրան  
ստիպեք լատիներեն սովորել վորևե բարձրա-  
գույն դպրոցում տեղավորվելու համար — պնդել եր  
ուսուցիչը։ Պերճախոսությանն ուժ տալով կա-  
րողացել եր ժողովականներից մի քանիսին իր  
կողմը քաշել, դիրեկտորն ել համաձայնել եր նրա  
հետ։ Վերջապես կանչեցին ինձ։

— Սա քո գրածն ե, — հարցրեց դիրեկտորը։

— Այն, — պատասխանեցի. մի փոքր հանկար-  
ծակի յեկած։

— Բա դու ինչպես համարձակվեցիր այս-  
պես վատ գույներով պատկերացնելու պետական  
ծառայողներին։

— Նա պաշտոնանկ չլինովնիկ ե։

— Ի՞նչ անենք, մի՞թե կարելի յե այդպիսի  
մարդուն անպատշաճ կերպով ներկայացնել։ Նա  
կարող ե վաստակավոր դառնալ, կենսաթոշակ  
ստանալ, — ավելացրեց խիստ կերպով տեսուչը, —  
տար և ուրիշ կերպ ուղղիր։

— Յեթե միայն պակասն այդ ե, հեշտ ե,  
կջնջեմ «պաշտոնանկ» բառը և կգրեմ «դուրս ար-

ված»։ Դուրս արված, յեթե լավ լիներ, նորից  
պաշտոնի մեջ կլիներ։ Դիրեկտորը ծիծաղեց և  
ազատ թողեց ինձ։ Այդ որվանից յես ել սկսեցի  
լատիներեն սովորել։ Իրանից հետո ավելի և ա-  
վելի սիրելի դարձա Ռոճիեվիչին և առանձնա-  
հատուկ ուշադրություն եր դարձնում ինձ վրա։  
Ջարմանալի յեր նրա գործը, վողջ մարմինը  
կարծես ծծված եր ողիով, յեթե նույնիսկ լամած  
ել չեր լինում, հենց այնպես, բռնվում եր հար-  
բեցողությամբ։ Մի անգամ այսպես հանկարծա-  
կի հարբեցողությամբ բռնվեց դասի ժամանակ։  
Աշակերտը գրատախտակի մոտ կանգնած՝ յերկրա-  
չափական մարմիններ եր նկարում, հանկարծ  
գոռաց. «ապա, պար արի լեզզինկան, տեսնեմ».  
և սկսեց ծափ տալ։ Աշակերտը տեղն ու տեղը  
սառեց։ Մենք ել նեղն ընկանք, բայց նա այնու-  
ամենայնիվ շարունակում եր ծափը։ «Ի՞նչ-  
պես, դու զգվում ես ազգային պարից։ Չգիտես,  
վոր ժողովրդական յերգերի և պարի մեջ ե  
ժողովրդի կյանքն ու վոզին արտահայտված։  
Ա՛յ, լեզզինկան, չե՞ վոր վրացական ե. ինչքան  
կենդանի պար ե»։ Ապա իբր թե սկսեց լեզզին-  
կա նվագել և հետո փոխեց մազուրկայի։ «Ա՛յ,  
սա յել մեր հնարած պարերիցն ե — անզուսպ  
մագուրկան. այժմ մի ուրիշ պար և տեսեք, թե՛  
ի՞նչ ե արտահայտում այդ պարը, և սկսեց «տրե-

պական» — մերթ ընդ մերթ իր պարը համեմելով  
զանազան տեսակի հայրոջանքներով: Վերջը կանգ  
առավ՝ գլխարկը ձեռքն առավ և դուրս ընկավ:  
Մենք աստծուն փառք ավինք, վոր վնչ դիրեկ-  
տորը, վնչ տեսուչը և վոչ ել ուրիշ մեկը ներկա  
չգտնվեց: Այնպես խղճացինք, վոր չգիտեցինք  
ծիծաղել, թե՛ լաց լինել: Յերբորդ որը շատ ա-  
մաշելով ներս մտավ: Յերկար ժամանակ լուռ  
կանգնած՝ ձայն չեր հանում, վերջն սկսեց.

— «Յերեխաներ, հին ժամանակ Հունաստա-  
նում զիտամար հարբեցնում ելին սարուկներին  
և նրանց սարորինակությունները գիտել ելին  
տալիս իրենց վորդիներին, վոր նրանց աչքի ա-  
ռաջ ցույց առային, թե ինչքան վատ բան է հարբե-  
ցողությունը, յերբ մարդիկ խելքները կորցնում,  
նմանվում են անասունի: Յերեկ չե, մյուս որը  
յես ձեզ ցույց ավի այդպիսի մի բան: Աշխատեք  
կյանքի դժվարություններին դիմանալ, ինձ նման  
չընկճվեք ու չփչանաք: Այժմ ի՞նչ եմ յես. մի-  
թե կարծում եք, վոր չեմ դգում Ֆիզիկապես  
այլանդակված լինելս: Բայց և այնպես, փառք  
աստծո, չնայած իմ Ֆիզիկական այլանդակու-  
թյանը՝ այնուամենայնիվ սիրտս ու հոգիս  
մաքուր ե, անարատ»: Մենք, կարծես բոլորս  
լաց ելին լինում և այն որվանից ել ավելի խղ-  
ճում ելինք նրան:

Փոխադրվեցի վերջին դասարանը. այդ ժա-  
մանակ յես ապրում եյի Փրանսերենի դասատու  
մուսիտ Տուրեսի տանը. յերեխաներն այս ուսուց-  
չին «Մոսե Տուրա»\*) ելին կանչում: Մի ան-  
գամ, յերեկոյան նրա մոտ հյուր յեկավ Ռոճի-  
եվիչը. նստեցին յերկուսով մենակ և սկսեցին թեյ  
խմել: Հյուրը ռում\*\*\*) պահանջեց, իր համար ել  
ածեց և հյուրի համար ել: Սկսեցին կամաց-կա-  
մաց զրուցել, տրամադրությունները բարձրա-  
ցավ — Փրանսիացին հիշեց Փրանսիական հեղա-  
փոխությունը և հիացմունքով սկսեց խոսել:

Հյուրը Լեհաստանը հիշեց, և այլևս զգուշությու-  
նը մի կողմ դրին, քանի վոր այնտեղ, բացի այդ  
յերկուսից ու ինձնից՝ վնչ վոք չկար: Յես ինձ  
համար կուչ եյի յեկել սենյակի մի անկյունում,  
սուս ու փուս, մինչև իսկ նրանք չեցին ել նկա-  
տել ինձ: Նրանց վայրիվերո զրույցն այնպես  
հրապուրեց ինձ, վոր յես ակամա զգացի դու-  
րեկանություն և ամբողջովին լսողության դար-  
ձա: Վերջը Ռոճիեվիչը թառանչ քաշելով ա-  
սաց. — «այժմ ել ի՞նչ ժամանակ է անհանգստա-  
նալու, քանի վոր իր ժամանակին չմտա ուղղական

\*) Տուրա — վրացերեն՝ շնագայլ.

\*\*) Ռում — խմիչք.

ծառայութեան մեջ, վորպեսզի դառնայի զորավար  
և պատեհ ըրպէյին Կոնրադի նման ոգտակար  
լինեյի իմ յերկրին»...

Այս վոր լսեցի, ինքս ինձ կորցրի: Ամբողջ  
զիշեր չկարողացա քնել: Ասում եյի՝ «ինչ ու-  
նեմ համալսարանում, ինչ. ավելի լավ չե՞, մտնել  
զինվորական ծառայութեան մեջ: Հանկարծ կա-  
րող եմ զորավար դառնալ: Վորքան շուտ զործի  
անցնեմ, այնքան լավ: Այս տարի վերջին դա-  
սարանում մի բան վոր նոր բան վոչինչ չեն  
սովորեցնում, հինն են կրկնել տալիս. դուրս  
կգամ, կասեմ՝ վոչ մի տեղ չեմ գնա. վերջացավ,  
գնաց»,— վորոշեցի յես և հայտնեցի հորս իմ  
ցանկութունը: Հայրս հավանութուն տվեց. — «քո  
կամքն ե, վորդիս. յես քո հասակին կին ու  
յերբեխաներ ունեյի, արդեն ընտանիքի տեր եյի»: Անմիջապես դուրս լեկա ուսումնարանից, բոլորը  
մնացել եյին զարմացած. սոսովոտից մինչ յերե-  
կո Ռոճիեվիչն աչքիցս չեր հեռանում: Չորս  
ամիս մնացի այսպես, բայց այդ չորս ամիսներն  
ավելի արդյունավետ եյին ինձ համար, քան ութ  
տարին՝ գիմնազիտում յեղածս ժամանակ: Հաջորդ  
մայիս ամսին հրատեշտ տվի ծնողներիս, իմերե-  
թին, և ճանապարհ ընկա դեպի Պետերբուրգ  
(Լենինգրադ): Կյանքի մեջ միանգամայն անփորձ,

շատ քիչ բան իմացող և աշխարհ չտեսած մար-  
դուն վիճակվեց ծովն անցնել, յերկար տարա-  
ծություններ կտրել ու մեն-մենակ հասնել Պետեր-  
բուրգ, ուր ապրում եր «Կանվո»-ում աշխատող  
յեղբայրս:



04

Պատ. խմբագիր՝ Ա. Մենրաբյան  
Տնի. խմբագիր՝ Սն. Գասպարյան  
Սրբազրիչ՝ Թ. Հովակիմյան

Գրավիտի լիազոր՝ Ղ-3508. Հրատ. 4440.

Պատվեր 371. Տիրա՝ 5000

Թուղթ 72x105. Տպադր 2<sup>3</sup>/<sub>5</sub> մամ.

Մեկ մամ. 16,640 նշան Հեղինակ.՝ մամ.

Հանձնված և արտադրության 13 ապրիլի 1938 թ.

Ստորադրված և տպագրության համար 28 ապրիլի 1938 թ.

ԳԻՆԸ 60 Կ.

Պետհրատի I տպարան, Յերեվան. Լենինի 65

«Ազգային գրադարան»



NL0396405

ԳԻՆԸ 60 Կ.

280

14027

Ա. ԾԵՐԵՏԵԼԻ

**Ր ա ս կ ա Վ**

Գնա Արմ. ՍՍՐ, Երևան, 1988